Հաստատում եմ
Տնօրեն՝ Խ.Նավասարդյան

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի N5
միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-Ի
V դասարանի դասղեկի
2023-2024 ուստարվա տարեկան աշխատանքի պլանավորում

Դասղեկ՝ Ն. Գալստյան

Կրթական-դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

Դասարանի ընդհանուր բնութագիրը

5-րդ դասարանում սովորում է 9 աշակերտ՝ 6 աղջիկ և 3 տղա: Դասարանում կան ընդունակ,ուշիմ և աշխատասեր աշակերտներ:Իմ նպատակն է դաստիարակչական նոր մեթոդների և աշխատանքների միջոցով բարձրացնել աշակերտների ուսման առաջադիմությունը, կարգապահությունը:Ստեղծել առողջ և համերաշխ կոլեկտիվ:

1. Հոգևոր դաստիարակություն

Հայ իրականության մեջ երեխայի հոգևոր զարգացման գործում անփոխարինելի է քրիստոնեական դաստիարակությունը: Աստվածաշնչյան պատվիրանները պատգամում են լինել բարի, արդար, առատաձեռն, ոչ նյութապաշտ, անտարբեր չլինել կարիքավորի հանդեպ և պարզապես՝ սիրել Աստծուն ու մերձավորին: Այդ պատվիրանները բառացիորեն փրկում են մարդուն այս ցնորված աշխարհում:

2.Գեղագիտական դաստիարակություն

Աշակերտների մեջ ձևավորել ճաշակ,մշակել գեղեցիկը,լավը տեսնելու և զգալու ունակություններ:Հետաքրքրություն և սեր արթնացնել նկարչության,երաժշտության,արվեստի հանդեպ:

3.Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն

Երեխաների մեջ սերմանել հայրենսիրություն,ծանոթանալով պատմության հերոսական էջերին:
Հայերը իրավունք չունեն ուժեղ չլինել,որովհետև թույլերին խղճում են,իսկ ուժեղների հետ հաշվի են նստում: Հայրենիքը չպետք է սիրել միայն գեղեցիկ բառերով,այն պետք է նաև պաշտպանել և ապրել այրենիքում:

4. Ֆիզիկական դաստիարակություն

Ֆիզիկական դաստիարակության խնդիրն է ամրապնդել երեխայի առողջությունը,նրան դարձնել կենսուրախ,հոգեպես և ֆիզիկապես ներդաշնակ,զարգացած մարդ:
Աշխատանքային

5.Աշխատանքային դաստիարակություն

ճիշտ կազմակերպել ինքնասպասարկման աշխատանքը,երեխաներին մասնակից դարձնել դասարանի մաքրմանը, կահավորմանը:Վերանորոգել տալ դասագրքեր,հոգ տանեկ,որ դասարանը և դպրոցի բակը մաքուր լինեն:

6.Բնապահպանական դաստիարակություն

Երեխան պետք է գիտակցի,որ ոչ մի բան անսպառ չէ:Բնությունը պատժում է նրանց,ովքեր ճիշտ չեն օգտվում դրանից:Պետք է արդյունավետ և խնայողաբար օգտագործել բնական հարստությունները,առանց դրա մարդկությունը չի կարող գոյատևել:Ուշադրություն դարձնել լճի աղտոտման և շրջակա միջավայրի մաքրության վրա:

7. Դպրոց-ընտանիք կապը

Դպրոցը և ընտանիքը լուծում են միևնույն կարևորագույն խնդիրը՝ մատաղ սերնդի ուսման և դաստիարակության գործը:Ուստի այս երկու օղակների աշխատանքը պետք է լինի փոխկապակցված և փոխհամաձայնեցված:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը

1. Կազմակերպչական հարցեր:
2. Դասարանի ավագի և խորհրդի ընտրություններ, դասասենյակի կահավորում, դասարանական անկյունի ստեղծում:
3. Զրույց «Ինչպե՞ս անցկացրեցի ամառային արձակուրդներս» թեմայով: Ընթերցած գրքերի բովանդակության քննարկում:
4. Ի՞նչ է մեզ համար հայրենիքը: Մենք, որպես քաղաքացի, ի՞նչ օգտակար բան կարող ենք անել հայրենիքի համար: Լավ ուսումը որպես լավ ապագայի գրավական:
5. Ուսուցչի տոն:Ուսուցչի դերը աշակերտի կյանքում:
6. Զրույց «Իմ երազանքներն ու նպատակները» թեմայով:
7. «Հայաստանի այն վայրերը որտեղ ես կուզեի լինել»
8. Զրույց «Ես սիրում եմ սպորտը» թեմայով:
9. Զրույց «Ո՞վ է ընկերը, ո՞րն է կոչվում լավ ընկեր» թեմայով:
10. Շրջապատը մաքուր պահելը մեր պարտականությունն է:
11. Մենք սիրում ենք մեր քաղաքը. մտովի զբոսանք քաղաքում և զրույց այն մասին, թե ո՞րն է մեր սիրած անկյունը քաղաքում:
12. Երթևեկության կանոններ: Ինչպիսի՞ն է մեր վարքագիծը երբ մենք հետիոտն ենք: Հետևել կանոններին: Խաղ գիտելիքի ամրապնդման համար:
13. Առողջ ապրելակերպ: Ի՞նչն է կարևոր իմ առողջության համար:
14. Զրույց «Իմ կարդացած գրքի ո՞ր հերոսն է տպավորվել իմ մեջ» թեմայով:
15. Զրույց «Համակարգիչն՝ ընկեր, թե՞ թշնամի», «Համակարգչային խաղերի ազդեցությունը» թեմաներով:
16. Նոր Տարի: Զրույց Նոր Տարվա խորհրդի, հրաշքների սպասման վերաբերյալ:
17. Տարվա եղանակները: Ձմեռ: Զրույց «Քնում է բնությունը թեմայով»:
18. Զրույց «Ինչպիսի՞ երկրում եմ ուզում ապրել » թեմայով:
19. Զրույց նվիրված Հայոց բանակին:
20. Զրույց « Իմ սիրած մասնագիտությունը թեմայով»:
21. Հիգիենայի կանոնները:
22. Առաջադիմություն և վարք: Առողջ մրցակցությունը առաջադիմության բարելավման գրավական:
23. Դաս բանավեճ «Իրավունք և պարտականություն » թեմայով:
24. Զրույց «Ընկերության և համագործակցության մասին»
25. Մարտի 8: Մայրության, գեղեցկության նվիրված դաս:
26. Կարծրատիպեր և նախապաշարմունքներ:
27. Ծանոթանում ենք եկեղեցական տոներից Զատիկին:
28. Ընտանիք և պարտականություններ, բարոյականություն և իրավունք:
29. Զրույց «Մենք բնապահպաններն ենք» թեմայով:
30. Կարգապահություն և առաջադիմություն:
31. Հայոց Մեծ Եղեռն:
32. Զրույց «Ի՞նչ մասնագիտություն եմ սիրում» թեմայով:
33. Խաղաղության մշակույթ:
34. Տարվա ամփոփում:

Digitally signed by
NAVASARDYAN
KHAZHAKN
1905610114
Date: 2023.09.26
13:09:05 AMT